ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ 5/1, ՀԵՌ.(374-15) 52-85-21

« 04 » փետրվարի 2026 թ.

№ ԱՍ/34.2-Ղ4-2/658-2026

«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ-ի տնօրեն
Ա. Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան,

Ձեզ է ուղարկվում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2026 թվականի փետրվարի 4-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 9-ի №35Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և «ՀՈՒՍԱԲԵՐ» փակ բաժնետիրական ընկերությանը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումար փոխանցելուն պարտավորեցնելու մասին» №24-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ 2 էջ:

04.02.2026

X

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Ա. Սաֆարյան

Կատարող՝ Սիրանուշ Ղարախանյան☎ 015 58 08 08 (124)

600.0024.04.02.26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 փետրվարի 2026 թվականի №24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի №35Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2011 թվականի փետրվարի 9-ի №35Ա որոշմամբ «ՀՈՒՍԱԲԵՐ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման №0906 թույլտվությունը (այսուհետ՝ թույլտվություն),

բ) 2026 թվականի հունվարի 20-ին Ընկերությունը դիմել է Հանձնաժողով՝ թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով,

գ) Ընկերության՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով պարտավորությունը մինչև 2026 թվականի հունվարի 20-ն ընկած ժամանակահատվածի համար կազմել է 321 503 (երեք հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր երեք) դրամ,

դ) Ընկերությունը 2026 թվականի հունվարի 23-ին կատարել է 25 000 (քսանհինգ հազար) դրամի չափով վճարում, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետը, 12-րդ և 17.1 հոդվածները, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի

2-րդ մասը, Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 9-ի «ՀՈՒՍԱԲԵՐ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված №ՌՌԳ/կ-110/1 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №35Ա որոշումը:
2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում №900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով մինչև 2026 թվականի հունվարի 20-ը հաշվարկված և հունվարի 23-ին Ընկերության կողմից կատարված գումարների տարբերությունը՝ 296 503 (երկու հարյուր իննսունվեց հազար հինգ հարյուր երեք) դրամ պարտքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք.Երևան
4 փետրվարի 2026 թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ Պ. 5/1
ԱՍ/34.2-Ղ4-2/658-2026պ/տ

Ս	գանձված է	Ա
Ֆ	Tax percue	Ի
Ո		Ի
Ս		Ի
S		T

05 FEB 2026

L0131772331AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ RETURN	CN15
☐ Անհայտ/ Unknown ☐ Տեղափոխված/ Gone away ☐ Թերի հասցե/ Insufficient address	☑ Մերժված / Refused ☑ Չի պահանջվել/ Unclaimed ☐
Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date	

27 MAR 2026

«Հուսաբեր» ՓԲԸ
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Ս. Զավարյան, 181

powered by Envelope, envelope.haypost.am

ARMENIA YEREVAN
0005
24 MAR 2026
AUSONIUS
MAYPOST

ARMENIA YEREVAN
0070
06 FEB 2026
AUSONIUS

CN 07

Տրման նշանակման օպերատոր /
Designated operator of origin

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

Առաքանու հասցեատեր/ Addressee of the item
«Հրատարակչություն» ՓԲԸ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Ս. Զավարյան, 181

A.R.

Ծառայողական/
On postal service
Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիքը/
On postal service

Առաքանու բնույթը/Nature of the item

- ☐ Առաջնային նամակ/ Priority letter
- ☐ Հրատարակչություն/ Printed paper
- ☐ Ծանրոց/ Parcel
- ☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter

Առաջնային/Priority
Օդային/By airmail

- ☐ Պատվիրված/Registered
- ☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery
- ☐ Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/
No of item LO131772331AM

- ☐ Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order
- ☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
- ☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Վերադարձնել /
Return to

Անուն կամ գրասենյակի անվանում/ Name	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Փողոց և թիվ/ Street and No	ՄՅԱՍՆԻԿՅԱՆ Պ. 5/1
Բնակավայր և երկիր/ Locality and country	Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

Լրացվում է ուղարկողի կողմից/To be filled in by the receiver

Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

- ☐ հանձնվել է/ delivered
- ☐ վճարվել է/ paid
- ☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

AL0131772331AM

Հավելյալ Նշում 1՝ ԱՍ/34.2-Ղ4-2/658-2026պ/տ
Հավելյալ Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am

ARMENIA YEREVAN
0070
06 FEB 2025
ARMENIA YEREVAN
24 MAR 2026